

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 246

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թերթերը՝ 345:—**Պրակները՝** 33, ձեռագրի սկզբում (պրակներ Զ—ԺԶ) 3-ական թերթ, իսկ վերջում (պրակներ ԺԷ—ԼԸ) 12-ական թերթ, ի բաց առյալ հետևյալ պրակները. ԺԵ՝ 7, ԼԸ՝ 8 և Ի՝ 10 թերթերից են:—**Մեծությունը՝** 15×10,5×4 սմ.:—**Նյութը՝** դեղնած և խունացած հասարակ թուղթ:—**Կազմը՝** չունի: Նույն ձեռագրից երկու թերթեր կպցրել են ձեռագրի կոնակին:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար, պակասում է և՛ վերջից, և՛ սկզբի հինգ պրակները ամբողջությամբ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 16—17:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրությունն՝** ձեռագիրն ունի մի հատ զարդագիր (թ. 206 բ), երկու հատ թոչնագիր (թ. թ. 146ա և 151բ) և երկու հատ լուսանցազարդ (թ. թ. 146ա և 151բ), բոլորն էլ նկարված շատ հասարակ ոճով:—**Գրիչը՝** Հակոբ վարդապետ Երևանցի:—**Պատվիրատուն՝** Հովհաննես վարդապետ:—**Ծաղկողը՝** անհայտ, հավանաբար գրիչը՝ նույն ինքն Հակոբ վարդապետը:—**Ժամանակը՝** 1688 թ.:—**Վայրը՝** Շոշ (Սպահան):—**Ծանոթություն՝** ստացված է նվեր արտասահմանից Վեհափառ Հայրապետի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 19ա.—Վկայութիւնք Հարանց վարուց:

Թ. 33ա.—Նախ ի բնազանցականէն Արիստոտէլի որ ասի մէթաֆիզիկայ, վկայութիւնք, Երկրորդ պրակ:

Թ. 42ա.—Ժո(ղո)վեալ հաւաքեցաք պատմութիւնքս ի լատինացոց հայելի վարուցն:

Թ. 81բ.—Ի չորեքտասան թղթոցն Ակակայ Կոստանդնուպոլսի հայրապետի և Պետրոսի Աղէքսանդրու հայրապետի, զոր յետ ժողովոյն Քաղկեդոնի գրեցին առ միմեանս Ակակայ առ Պետրոս:

Թ. 83բ.—Սրբոյն և Ագրեա անմարմնոյն ի մարմնի որ զարդ և միտ անապատի կոչի նորին խրատ ոգէշահ:

Թ. 94ա.—Յաղագս հարկաւորութեանց հաւատոյն: Առանց հաւատոյ անհնար է հաճոյանալ Աստուծոյ:

Թ. 96բ.—Յաղագս ուրացելոց զԱստուած, անհաւատոց և հերձուածողաց: Յաղագս յուսոյ:

Թ. 98ա.—Յաղագս սիրոյն Աստուծոյ և ընկերին:

Թ. 103բ.—Պետրոսի երկրորդ թղթոյն:

Թ. 107ա.—Ի թղթոյն Երանելւոյն Յովհաննու Աւետարանչի:

Թ. 109բ.—Ի թղթոյն Երանելւոյն Յուդայի:

Թ. 110ա.—Ի մեկնչէն Յոհաննու տեսլեանն:

Թ. 114բ.—Յաղագս եթէ Աստուած եղև առանց փոփոխման, նոյնպէս և մարդն Աստուած եղև առանց փոփոխման:

Թ. 117ա.—Յաղագս կամացն որ մի է և ոչ երկու:

Թ. 118ա.—Յաղագս թէ Քրիստոս մի է բնութեամբ, ներգործութեամբ և կամօք, նոյն Քրիստոս մեռաւ և յարեաւ:

Թ. 123ա.—Յաղագս թէ փափն ոչ է գլուխ արիսանէից:

Թ. 125ա.—Յաղագս քաւարանին և եղծումն նորին:

Թ. 127բ.—Որ առնէ խորհուրդ Եկեղեցւոյ:

Թ. 129բ.—Քանիք են պարգևք հոգւոյն:

Թ. 132ա.—Սահմանք ի գրոց մոլութեանց:

Թ. 142ա.—Սրբոյն Բարսեղի Կեսարացու հայրապետին ասացեալ, յաղագս պահոց ի գիրս որ կոչի փողեցէք:

Թ. 144բ.—Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ ի մեկնութենէ թ երանութեանց:

Թ. 164ա.—Աւգնեա Սուրբ Հոգի Աստուած Եռամեծի Յովհաննու Որոտնեցոյ ի բան Աւետարանին որ ասէ, և յամսեանն զերրորդի առաքացաւ:

Թ. 151բ.—Նորին քարոզ Ծնընդեան ի բանն, բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից և 1968 թվականի № Է-ից:

Թ. 169ա.—Յայլմէ քարոզ վասն մկրտութեան ի բանն ի քէնէ Տէր աղբեր կենաց և լուսով, արդ պէտք ասեն թէ երկիրս ոչ տայ պտուղ, վասն կրկին պատճառի:

Թ. 180բ.—Նորին քարոզ գալստեան Տեառն քառասնօրեայ ի տաճարն ի բանն, արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի:

Թ. 193ա.—Դարձեալ քարոզ Ծաղկազարդին ի բանն, աւրինեալ որ գաս անուն Տեառն և օրհնեսցուք զքեզ ի տնէ Տեառն:

Թ. 206բ.—Նորին մեծի Ե. շափաթի, առաջին քարոզ, խորհուրդ ճշմարիտ Պատարագին Քրիստոսի ի բանն Պաւղոսի, գիշերին որում մատնէր Յիսուս առ հաց գոհացաւ եբեկ և ասէ: Այս է մարմին իմ, և այս է արիւն իմ:

Թ. 215բ.—Յայսմէ քարոզ մեծի ուրբաթին սուգն ի բանն Առաքելոյն, կտակ յետ մահուան հաստատանէ: (Ս)ովորութիւն է մարդկան յորժամ մեռանի որք ի յայլ տեղիս և առնէ կտակ:

Թ. 222ա.—Նորին քարոզ վասն յարութեան ի բանս Երգ երգոցն, որ նստին ի պարտէզս այլք անսան քեզ, լսելի արայ ինձ զձայն քո, ասէ իմաստունն:

Թ. 238ա.—Քարոզ Համբարձմանն ի բանն հանէ զաշակերտսն ի Բեթանիայ, ամբարձ զձեռն իւր աւրհնեաց զնոսա և ել յերկինս:

Թ. 250ա.—Նորին քարոզ գալուստն Սուրբ Հոգւոյն ի բանն Դաւթի, ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերա նորա ձիւնացի սաղմոն:

Թ. 261բ.—Նորին դարձեալ քարոզ վառդավառին, ի նոյն բանն և յետ վեց աւուր առնու զՊետրոս և զՅակոբս, և հանէ ի լեառն և այլակերպեցաւ առաջինաց:

Թ. 276ա.—Նորին քարոզ Աստուածածնին և փոխմանն ի բանն Սողոմոնի յերգս երգոցն, պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ:

Թ. 279բ.—Նորին քարոզ Խաչի տօնին ի բանն, փայտ կենաց է ամենեցուն որք պատսպարին ի նա և որ յենուն ի նա իբր տէր հաստատութեամբ:

Թ. 297ա.—Յայլմէ քարոզ վասն ննջեցելոց, ի բանն Յոբայ, ողորմեցարուք ինձ, ողորմեցարուք որ բարեկամք իմ, զի ձեռն Տեառն մխեցաւ յիս:

Թ. 305ա.—Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք վասն առ ի պատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց բանի, եթէ ի պէտս քարոզութեան, և թէ ի պէտս վիճաբանութեան մանաւանդ ի պէտս գիտութեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 16ա.—Վասն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ ով մա[ռ]կա[նա]ցու, յիշեա զանարժան զՅովանէս վարդապետ, որ ի թուին ՌՃԼԷ (1688 թ.) և ի յօգոստոս Զ մակագրեցի ի վայելումն որդեկին մերոյ յԵրևանցի Յակոբ վարդապետն, (թ. 16բ) զոր վասն ըստահակաց նստելով ի տան մերում գրեցի զայս գիրքս:

Թ. 32ա.—Այս մակագրեցաւ ի թուին ՌԾԾԱ (1702 թ.) փետրվար ամսոյ ի տասն և չորք քառասնօրեա գալստեան Փրկչին ի նոյն յաւուր ձեռամբ փանաքի Յակոբ ևեթ վարդապետի յԵրևանեցւոյ ի Շօշ քաղաքիս:

Թ. 124բ.—Ով ցանկալի ի միաբնակ եղբայր յիշեա զՅակոբ թշուառ ոգի յԵրևանեցիս գծող և դու յիշեալ լիջիս յաւուր աճետ ատենի:

Թ. 221բ.—Եւ եղկելի Յակոբ ևեթ գրիչս յայսմ հրաշափառ յաւուրս մեծի, աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած որ առատն յիշէ զձեզ ի բարին իւրոյ, ամէն, Հայր:

Թ. 275բ.—Դարձեալ մաղթելով աղաչեմ արտասուաճեղ աչօք ով ընթերցողք միագումար և սրբազանիցդ խումբք, ո՞ որ հանդիպիք այս փոքր տառիս, յիշեցէք տարտամ Յակոբ գրիչս յԵրևանեցի:

Թ. 296բ.—Ով դասք երամից սուրբ վարդապետաց, յորժամ հանդիպիք այսմ ծաղկեալ և անուշահոտ դուզնաքեա պտղաւէտ բուրաստանիս, և ճաշակմամբ սորին. յիշել աղաչեմ զմեղօք մածեալ փանաքի զՅակոբ ևեթ սուտանուն վարդապետս յԵրևանեցի, և զծնողքն իմ զԽաչատուր քահանայն, և զԳեօզալ տատն, և զեղբարսն իմ զՊողոսն, և զԹօվմասն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ:

Թ. 338բ.—Զմեղաւոր թշուառ գրիչ Յակոբ յետնեալս յԵրևանցի, յիշեցէք ի Քրիստոս և թողութիւն շնորհէք:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 32բ.—Այսօր յարեաւ բանն հայրական առեալ մարմնօվն անբաժանական: Այսօր յարեաւ որդին կուսական, Աստուած և մարդն անփոխադրական: Աւօյաեաւ:

Թ. 123բ.—Եթէ ես ապողոսեան եմ:

Թ. 304բ.—Կաշառ կուրաց:

(Շարունակելի)